

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԱԿՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, **շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ** մատուցելու նպատակով կազմակերպվելիք մրցույթների հնարավոր մասնակիցների որոշման նպատակով հայտարարում է նախարարակազմի ընթացակարգ:

Հետաքրքրված համապատասխանող Հայտատուները Հայտերը պետք է ներկայացնեն ստորև նշված հասցեով մինչև 2017թ. հուլիսի 4-ը ներառյալ: Հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ info@arspiu.com էլեկտրոնային հասցեով:

ՆԱԽԱՐԱՐԱԿՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախարարակազմի ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է բավարարի ստորև բերված որակավորման չափանիշներին՝

Ունենա ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված համապատասխան անհրաժեշտ լիցենզիաները, այդ թվում հիդրոտեխնիկական բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու:

- Ունենա առնվազն 5 տարվա փորձ շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցելու (այդ թվում հիդրոտեխնիկական բնույթի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն) ոլորտում /ներկայացնել իրականացրած պայմանագրերն ըստ տարիների՝ նշելով ծառայությունների նկարագրությունը, ծավալը և Պատվիրատուին, ինչպես նաև կատարված տարածաշրջանը/:

- Ունենա որակավորված և փորձառու անձնակազմ, որոնք են ծրագրի ղեկավար, մասնագետներ /ներկայացնել կենսագրական թերթիկները/:

- Ունենա աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հիմնական սարքավորումները /ներկայացնել ցանկ/:

Վերոշարադրյալի շրջանակում ներկայացվող հասցեն, որին հղում է կատարվում, հետևյալն է.

Տնօրենի տեղակալ
պրն. Արմեն Վանյան

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» / ԳԾԻԳ ՊՀ /

Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0014, Կոմիտասի փող. 54 Բ, 3-րդ հարկ;
Հեռ. 29 73 01, 29 73 02; ֆաքս 29 73 08;
Էլ-փոստ. info@arspiu.com